

րել պարտ է»(3): Հեղինակներին քիչեր ինքզինքնին արդարացուցած են այլափառներու գրողներին ալ քաղած ըլլալուն համար:

Առ հասարակ կրնանք ըսել թէ անոնք հոգն ունեցած են տեղ տալ նախ մեծ մեկին չնայելու, ուսկից ալ դալու ըլլալին, եւ յետոյ՝ ամէնուն: Հոգ չէ թէ Աթանասի քով Եւսեբիոս գրուէր, Դիդիմոս՝ Թէոփոլիտոսի հետ, Իսիդորոս եւ Թէոփոլ, Բար-

(3) Շոթայ մեկնութիւն Ղեւոնդանի, յառաջաբան,

(4) Հմմտ. Dict. de la Bible - Supplément - Louis Pirot. հտ. Ա. Սիւն 1084-1094. Գար-ձեալ Enciclopedia Cattolica, Catena բառը:

սեղ՝ Որոգինէսի, եւ Դիոգոր՝ Սեւերոսի մօտ. իրենց փափաքն էր ամփոփել հաւաքածոյին մէջ կարելի եղածին չափ բաղմաթիւ վկայութիւններ:

Ձանց կ'ընեմ յիշել շղթաներու մասին զխոնականներէ մինչեւ այսօր կատարուած ուսումնասիրութեան արդիւնքը՝ ձեռագիրներու դասակարգութեան, հրատարակութեան եւ թարգմանութեան: Ս. Գրքի խմբագիր մեկնութիւններու ցանկը գիւրդին է գտնել Համայնագիրտակներու եւ Սուրբ Գրքի բառարաններու մէջ(4):

Հ. ՔԵՐՈՐԷՅ Ա. ՉՐԱՔԵԱՆ

(Շարունակելի)

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՒ

(Շար. տես «Բագմավեպ», 1956, Բ. 1-2, էջ 3)

ԴՐԱԽՏԱԳԻՐՔԻ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆԸ

Առաքել Սիւնեցիի գործածած չափն է, Դրախտագիրքի մէջ, 4-4-5: Երրորդ անգամը, հնգավանկ, մեր հրատարակութեան մէջ՝ առանձին տողով կը ներկայացնենք, քիչ մը ներսօք տկտկով: Հետեւաբար, իրականին մէջ, ամէն մէկ տուն կազմուած է ւերկու տողերէ, որոնք մեր չարուածքին մէջ՝ չորսի վերածուցան:

Սակայն չափը այնքան խիստ կերպով պահուած չէ տեւողաբար. ենթակայ է բացառութիւններու: Այսպէս, կը պատահի որ առաջին եւ երկրորդ անդամները ըլլան հնգավանկ, թէեւ ոչ այնքան յաճախակի: Գլխաւորաբար երրորդ անդամն է որ ըստէս, փոխանակ հինգի, կ'ուենայ վեց եւ երբեմն մինչեւ եօթը վանկ:

Օրինակները կը թուենք մեր նախորդ յօդուածին մէջ հրատարակած Առաջին ձառն, տալով նաեւ համապատասխան տողերու թիւերը.

գ. անդամ, վեցավանկ

- ու զհամ քաղցրութեան մեղ (25)
- խոտ կու արածես քեզ (35)
- ու ան օրինակ քեզ (39)
- որ դու վայելես քեզ (55)
- ու մարմինդ գիշեր քեզ (67)
- որ ցաւ կու ծնանի քեզ (113)
- ու անդ ժողովէ զմեզ (146)

գ. անդամ, եօթնավանկ

- ու Աստուած հաճի ի քեզ (43)
- ու բարի տայ կարծել քեզ (119)

Ինչպէս կը տեսնէք, վերոյիշեալ պարագաներուն, միշտ ու մը կամ որ մը կայ նախադասութեան մէջ, երբեմն ալ ի: Ձեռագրին մէջ, եւ գլխաւորապէս Ա օրինակին մէջ, այդ ու, քէ, որ կամ ի բառերուն վրայ կ'ընդ սուղ մը (օ) նշանակուած է: Այդ նշանը, չարակոչներու մէջ շատ յաճախակի կը գործածուի, եւ վանկն արագացնելու կը ծառայէ: Հաւանօրէն մեր ձեռագրին մէջ ալ այդ նշանակութեամբ գործածուած է:

Ուրեմն այդ ու-ն յաճախ պիտի կարդանք ' (պարզապէս՝ վ), կցելով յաջորդ բառին, որ ընդհանրապէս ձայնաւորով կը սկսի: Օրինակ.

- ' ան օրինակ քեզ (39)
- ' անդ ժողովէ զմեզ (146)

Բայց յաճախ այս յապաւումը տեղի պիտի ունենայ նաեւ երբ յաջորդող բառը բաղաձայնով սկսի: Օրինակ.

- ' և զհամ քաղցրութեան մեղ (25)
- ' և մարմինդ գիշեր քեզ (67)
- ' և Աստուած հաճի (ի) քեզ (43)

Այս վերջին օրինակին մէջ, ներքին ի նախդիրն ալ յապաւելու է ու կցելու նախորդ վանկին:

Նախորդ անգամ մեր հրատարակած յօդուածին մէջ՝ անփոփոխ թողած էինք բնագիրը, վերոյիշեալ պարագաներուն, վստահելով ընթերցողին ուշադրութեան: Այսուհետեւ կ'ընդգծենք այդ յապաւելի Այսուհետեւ կ'ընդգծենք այդ յապաւելի խոտը, մատնանշելու համար՝ որ ատոնք սուղ կամ կարճ վանկեր են (մաղաբոյժ

վանկեր), ձեռագրին մէջ իսկ յաճախ այդպէս նշանակուած:

Ձեռք ուղեր մեր կողմէ գիրքեր յապաւել, աւելի առարկայական կերպով ներկայացնելու համար բնագիրը:

Տակաւին կը մնան բացառութիւններ, որոնք անշուշտ յարգելի են եւ անձեռնմխելի: Օրինակ.

ա. անդամ, հնգավանկ

- անկեաց քեզ Աստուած (44)
- գիշեր գէշ իրաց (72)

բ. անդամ, հնգավանկ

- է անգիտութեամբ (80)
- ի կենաց բանէն (88)

Ասոնք կը թողունք ինչպէս որ են, բաւականաչափ այս անդրադարձութեամբ:

Նկատելի է նաեւ ոտանաւորին մէջ վանկ կազմող ը-ի անտեղի գործածութիւնը՝ ձեռագրին մէջ: Յաճախ բոլորովին անտեսուած է. մերթ կը գրուի՝ ուր աւելորդ է: Մեր հրատարակութեան մէջ դանց կ'ընենք արտադրել այդ ը-երը, եւ կը դրահանանք ձեռագրի տարբերակները տալով:

Յ ա ջ ո ռ դ ա բ ար, հրատարակութեան յանձնելով բնագրին չարունակութիւնը, պիտի խօսինք Դրախտագիրքի լեզուն, պարունակութեան եւ գրական արժեքի մասին:

(Շարունակելի)

Բ Ն Ա Գ Ի Ր

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ն Ա Ռ

Զի այլ փաղափ կայ մեզ գնալոյ:

ՏՈՒՆՍ ԺԳ

Յայդ մին քաղաքդ որ կու կենաս,
միայն այդ չէ ձեզ:Այլ մեծ քաղաք կայ ձեզ որիչ,
որ գուման չէ ձեզ:Խիստ մեծ ու արձակ է այն քաղաքն
զոր դու տեսեալ չես:Գնա դու շուտով ի յայն քաղաքն
եւ քո աչօքդ տես:Դու մի պահել խեղճ ու զարիպ
յայն քաղաքէն զքեզ:Ամէն աշխարհս փութով գնացին
յայն քաղաքն ի տես:Շատ թաղաւորք եւ շատ իշխանք
գնացին տեղատես:Եւ կու կուռին մէկ հետ մէկի
թէ տեղ գտանեմք մեզ:Աստուած յերկնիցն յերկիր էրեկ
յայն քաղաքն ի տես:Ու տարաւ զամէն սուրբք յայն քաղաքն
ի զարդարանք մեզ⁽¹⁾:

- 2 կա B:
3 — տունս B:
4 կու կենաս × կենայք A:
6 + որ կայ A:

- 10 գնայ B:
11 աչաքդ A:
12 Այս տունէն առաջ՝ աւելորդ տուն մը ունի A.
Գնա դու շուտով՝ տես ու լսէ
թէ ինչեր կայ ի ներս.
Անդ շատ բաներ կա ցեղ ըզցեղ,
տես եւ ուսիր քեզ:
23 ի × եւ A:

(1) 20-23 տողերուն դիմաց, լուսանցքի մէջ,
A եւ B կը գրեն. Գրխտոս որ ի գերեզմանն

Երկու հոգի փութեան գնացին
թէ այդ չէ ի բան մեզ:Յետոյ կու դան լալով խնդրեն
թէ տեղ տուէք մեզ⁽²⁾:Չտան նոցա տեղ, այլ հալածեն
թէ տեղ չկայ ձեզ:Ուստի եկիք՝ անդր գնացէք,
այն է քաղաք ձեզ:Երթան նոքա յիւրեանց տեղին
ու հուր առաքեն մեզ:Այրեն հրով զայն մեծ քաղաքն
ու յայլ տեղ տանին զմեզ:Երեք հոգի սիրով գնացին
յայն քաղաքն ի տես:Երեք օր կացին ու այլ դուրս եկին,
բայց չկացին առ մեզ⁽³⁾:Գնացին նոքա յայլ աղդ քաղաք
տեղ պատրաստել մեզ:Յետոյ կու դան յայն քաղաքէն
ու առնուն տանին զմեզ:Յայն ցանկալի քաղաքն որ ինքն
Աստուած էրեկ ի տես,Անդ հանապաղ լոյս բորբոքի,
թէ գնաս՝ տեսանես:

- 24 փախեան A:
26 կու դայն B:
29 չկա A:
32 — տեղին A:
33 հուր × հոր B:
42 քաղաքն B:
44 Յան B:
45 էր եկ ետես B:
47 — թէ A:

(2) 24-27 տողերուն դիմաց, լուսանցքի մէջ,
A եւ B կը գրեն. Ենովք եւ Եղիայ:
(3) 36-39 տողերուն դիմաց, լուսանցքի մէջ,
A եւ B կը գրեն. Գրխտոս եւ մայրն եւ Յով.
աւ. (= Յովհաննէս Աւետարանիչ):

Ինքն արարիչն յայն քաղաքին
տեղ գնեաց արեամբն մեզ.
50 Եւ ետ բնական զայն տեղն միայն
Հայոց աղդիս մեզ⁽⁴⁾:

Եթէ երթաս դու յայն քաղաքն
զայն տեղն տան քեզ:Որպէս զխուսկ անապական
55 անոյշ պահէ զքեզ:Ամենայն աղդ կու աղաղակեն
քէ յայդ տեղէդ տուք մեզ.
Թէպէտ շատ լան եւ աղաչեն,
զոչ ու չթողուն ի ներս:

- 49 արեամբ A:
55 + ու անուշ A:
57 տեղէտ AB:
59 չզոչ ու B:

(4) 48-51 տողերուն դիմաց, լուսանցքի մէջ,
A եւ B կը գրեն. Ղջառներն:



Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ն Ա Ռ

Զի այն է բնական փաղափն մեր, վասն
որոյ պարտ է այժմ գնալ տեսանել զայն
եւ տեղիք պատրաստել մեզ:

ՏՈՒՆՍ Է

6 Այն մեծ քաղաքն որ ասացաք
է հայրենիք մեզ:Դու այլ ջանա շուտով գնալ
անդ տեղատես քեզ:10 Դու քո ոտքդ ջանա գնալ
եւ քո աչօքդ տես.
Թէ այլք տանին զքեզ յայն տեղին,
այն չէ օգուտ քեզ:

- 7 մեզ × մեր A:
8 ջանայ AB: գնայ B:
10 ջանայ B:
13 յօգուտ A:

Քանի ունիս դու տեսուիս

15 վեր գնա շուտով տես.
Զլինի թէ դու հէնց օր երթաս,
որ տեսուիս չես:Շուտով գնա, դու քեզ լսէ
եւ քո աչօքդ տես:20 Յորժամ չլինի աչք եւ ախանջ,
գնաս, ի՞նչ տեսանես:Այսօր է խիստ մեծ թափառում
այն քաղաքին քեզ:25 Յետոյ թէ այլք տանին զքեզ,
ոչ ինչ չվայելես:Չայն մեծ քաղաքն որ Աստուած սրբօքն
իւրովք գնաց ի տես,Զլինի թէ անխելանաս
քէ այն չի պիտիլ քեզ:30 Դու ինչ գիտես քէ ինչ զանազան
բարիք կան անդ քեզ.
Յորժամ երթաս ներս յայն քաղաքն,
այլ ոչ մեղանչես:

- 16 հնց A:
17 + որ ի տեսուիս A:
20 չլինի B:
22 թափառում B:
24 ըզքեզ A:
26 Յայն A:
27 իւրօք A:
32 ներս յայն × մերձ այն B:



Զ Ո Ր Կ Ր Ո Ր Դ Ն Ա Ռ

Թէ քանի զանազան բարիք կան այն փա-
ղափն, [q]որ աստ ոչ գոյ:

ՏՈՒՆՍ ԻԹ

5 Յամէն չարեաց ի զատ կու պահէ
այն քաղաքն զքեզ:Ոչ կու քաղցիս, ու ոչ ծարաւիս
ու ոչ ցաւ տիրէ քեզ:

4 — Տունս A:

9 Ձինչ անօրէն մարդ որ մտնու՝
10 կու չարչարեն ի ներս .
Ձոմանս հանեն խիստ խայտառակ ,
ու այլ տանին ի ներս :

Իսկ որ խիստ սուրբ է եւ արդար ,
լոյս կու վառեն ի ներս .
15 Եւ յամենայն ազգաց երթան
լուսով ի նա տես :

Վասն այն դնա շուտով դու քեզ
անդր տեղատես .
Քեզ տուն չինես եւ լից բարով ,
20 որ անդ հանգիցես :

Շատ բարութիւն կայ յայն քաղաքն
մէկ մէկ ասեմ քեզ .
2 Ձի զոր ինչ անդր քեզ կու տան
յայլ տեղ չգտանես :

25 Յայդ օտար գեղդ որ կու կենաս՝
մահ կու բերէ քեզ .
Երբ յայն քաղաքն մտանես՝
կենդանացնէ զքեզ :

30 Յայդ օտար գեղդ որ կու կենաս՝
ի հող կու դնէ զքեզ .
Իսկ նա կենօք եւ մեծ փառօք
յարուցանէ զքեզ :

Այդ օտար գեղդ որ կաս ի ներս ,
ի խոր կու թաղէ զքեզ .
35 Իսկ նա փառօք կենդանացեալ
յերկինս հանէ զքեզ :

11 Ձոմանս X զկէսք դուրս A:
11 խայտառակ X անառակ B:
14 լուս B:
15 ամենայն B:
16 նայ B:
18 անդր տեղատես B:
21 այն B:
23 անդր AB:
25 Յայտ A:
28 քեզ B:
29 Յայտ AB: գեղտ A:
30 քեզ B:
33 Այտ B:
36 ըզքեզ A:

Այդ օտար գեղդ որ կու սիրես՝
լալով վարէ զքեզ .
Իսկ այն քաղաքն ծաղկեալ լուսով
40 ուրախացնէ զքեզ :

Այդ հարսանիքդ որ յայդ գեղդ կու առ-
սուզ կու բերէ քեզ . [նեն
Իսկ այն քաղաքին լացն եւ ողբալն
տայ հարսանիս քեզ :

45 Օտար գեղդիդ կարմիր ու կանաչն
ի սեւ կու փոխի ձեզ .
Այն քաղաքին սգաւոր մենալ
ծաղկազարդէ զքեզ :

50 Օտար գեղդիդ ծափն եւ պարելն
ի լաց կու փոխի քեզ .
Այն քաղաքին լաց ու աղաղակն
ծիծաղ բերէ քեզ :

Օտար գեղդիդ խաղն եւ գուսանն
ձայն գուժի տան քեզ .
55 Այն քաղաքին գուժն եւ ողբալն
ծափս ծափէ զքեզ :

Յայդ օտար գեղդ ուտել ու ըմպելն
աղբ կու դարձնէ զքեզ .
Այն քաղաքին պանդուխտ կենալն
60 ծաղկահոտէ զքեզ :

Այդ օտար գեղդ ի յԱստուծոյ
օտարացնէ զքեզ .
Իսկ այն քաղաքն երբ մտանես՝
յԱստուած հասցնէ զքեզ :

37 Այտ A:
38 վայրէ B:
41 Այտ հարս. A:
41 յայտ գեղտ B:
44 տա A:
45 Աւտար AB: կանանչն A:
47 սղգաւոր B:
49 Աւտար AB:
53 Աւտար AB: գեղիտ B:
54 տա A:
55 ողբումն A:
56 ծափըս B:
57 Յայտ AB:
58 դարձին B:
59 կենալ A:
64 հասցէ B:

65 Այդ գեղդ է շատ ազգի ազգի
մեղաց պատճառ քեզ .
Իսկ անդ թէպէտ որ խիստ կամիս ,
մեղք չհանդիպի քեզ :

Յայդ գեղդ շատ չար սատանայք
կան հակառակ քեզ .
70 Իսկ յայն քաղաքն յայդ չարերէդ
մին տեսանել չես :

Որքան յայդ գեղդ կու կենաս՝
յօտար կուռի ես .
75 Յայն քաղաքին անհող կացիր ,
այլ կուռ չկայ քեզ :

Յայդ գեղդ որ կաս միշտ ցուրտն եւ շոյն
կու նեղացնէ զքեզ .
Իսկ անդ ոչ ցուրտ կայ եւ ոչ շոյ ,
80 անհող կեցիր քեզ :

Յայդ գեղդ զրկողքն եւ կողոպտողքն
կու նեղացնեն զքեզ .
Յայն քաղաքին որքան կենաս ,
ոչ ոյ չխօսի ընդ քեզ :

85 Յայդ օտար գեղդ գուման մահու
կու չարչարէ զքեզ .
Իսկ յայն քաղաքն յոյս յարութեան
ուրախացնէ զքեզ :

Այդ չար գեղդիդ հարեւաններն
կու դառնացնեն զքեզ .
90 Այն քաղաքին հարեւաններն
իսկի չնեղեն զքեզ :

65 գեղտ B: — է շատ B:
65 + ու ազգի ազգի A:
69-124 Ամէն տունի առաջին զխտատեղը մոռցը-
ւած են:
69 չար X պեղծ A:
71 այն X յայն A: յայտ B: չարերէտ AB:
73 գեղէտ B:
76 չեղայ A:
77 Յայտ գեղտ B:
79 անդ X այտ B:
81 Յայտ գեղտ B:
84 ընդ քեզ X զքեզ A:
85 մահու X հանու B:
92 քեզ B:

ԲԱԶՄԱՎԵՊ

Այդ օտար գեղդ երբ աւերի՝
չլաւրեցնէ զքեզ .
95 Իսկ այն քաղաքն երբ աւերի՝
թաղաւորէ զքեզ :

Թէ յայն գեղէն զքեզ վարեն՝
կու դառնացնեն զքեզ .
Բայց յայն տեղացն յորժամ վարեն՝
100 մեծ աւետիս քեզ :

Թէ յայդ գեղէդ ի դուրս ելնես՝
յայլ գեղ երթաս քեզ ,
Իսկ յայն տեղացն երբ ելանես՝
յերկինս հանեն զքեզ :


5 Յայդ գեղդ շատ չարք եւ անօրէնք
դահմաթ կու տան քեզ .
Իսկ անդ ոչ չարք ու ոչ անօրէնք
այլ չերեւին քեզ :

Յայդ օտար գեղդ գող ու աւաղակը
10 կու նեղացնեն զքեզ .
Իսկ անդ ոչ գող ու ոչ աւաղակը
այլ չերեւին քեզ :

Յայդ օտար գեղդ մահ տարածամ
դայ դառնացնէ զքեզ .
15 Իսկ յայն քաղաքն այլ մահ չկայ
կենաց կայ յոյս քեզ :

Յայդ օտար գեղդ ի շաբաթն մին
օր կիրակի քեզ .
Իսկ անդ ամէն օր կիրակի ,
20 անհող կացիր քեզ :

93 Այտ A: գեղտ B:
95 երբ X երբ B:
98 — կու B:
101 յայտ AB: ելանես A:
104 ըզքեզ A:
105 Յայտ A: գեղտ B: եւ X ու անօրէնք B:
108 չերեւին B:
109 Յայտ A: գեղտ B:
109-112 X 113-116 A (եռեւառաջութիւն տունե-
րու):
113 Յայտ A: գեղտ AB:
114 դա B:
115 անդ B: չեղայ A:
116 Յայտ B:
117 Յայտ B:
117 Յայտ B:



Քան զայս այլ ի՞նչ յերկար ասեմ
այս ամէնք առ քեզ.
Եւ շատ բարեաց խօսք ու խարար,
որ սուտ չկայ ի ներս:

122 ամէնք առ քեզ X ամէն փառք քեզ A. ամէն
բարք քեզ B:
124 չկա A:



Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ճ Ա Ռ

Թէ ուր է քաղաքն այն, եւ կամ վասն
էր քաղաք կոչի, այսինքն է՝ զի նա
քաղէ գամեմայն մարդիկ աշխարհէ, եւ
անտի քաղուին յարութեամբն, զի հա-
սեալ են հունձ: Եւ անդ ֆողարկեալ
ծածկին տապանօֆն. վասն որոյ անդ
ասեմ առ Աստուած՝ քէ քո եղաք:
Վասն որոյ ասէ Յոր. «Եղիցի քաղաքն
իմ գերեզման»(1):

ՏՈՒՆՍ ԺԳ

Թէ հարցանես ո՞րն է այն քաղաքն,
եկ որ ասեմ քեզ.
Տամ քեզ նշան այն քաղաքին
որ դու հեռի չես:

20 Զոր ինչ վաճառ վաճառ առնել՝
անդր դտանես.

Շատ դանաղան դուժաւ կայ անդ,
ջանա հասանես:

3 նայ A:
4 մարդէք A: մարդկան B: յաշխարհի A:
5 անդի B:
5-6 հասել B:
7 ծածկին X ծաղկին A:
7 — վասն որոյ... A:
11 Տուն B:
12 + քէ որն A:
19 ջանայ A:

(1) Յովք 2, 10:

20 Զինչ լաւ կուժաւ կայր՝ քաղեցին,
դու այլ ջանա քեզ.
21 Զինի թէ դու մահրում մնաս,
ու յետոյ տանջես զքեզ:

Քանի որ դու ապրանք ունես,
վաճառ արա քեզ.
22 Զինի թէ դու աղքատ երթաս
ու ոչ ինչ չծախես քեզ:

Յիմար կուսանքն յետոյ եկին
թէ իւր գնեմք մեզ.
30 Ու յորժամ նոքա գին չունէին,
գնացին սեւերես:

Դարձեալ սկսան ի մոյր առնել
թէ իրք մին տան մեզ.
Ասցին թէ չկայ որ բաւական
լինի մեզ եւ ձեզ:

25 Զամենայն թաղ ի չուրջ եկին
քէ տուք սաղաղայ մեզ.
Ասեն գնացէք ի վաճառականս
եւ գնեցէք ձեզ:

40 Ի թաղէ թաղ չուրջ գալն՝ յուշացան,
հարսանիքն էանց ի ներս.
Յետոյ եկին՝ Տէր, Տէր, մեզ բաց.
ասէ. Զգիտեմ զձեզ(2):

26 Զայս Տէրն յայտնեաց յԱւետարանն,
սիրով խրատ մեզ.
27 Եթէ չտայն յայն քաղաքին
ողորմութիւն ձեզ:

21 ջանայ AB:
22 մահրում մնաս դժուարընթեմի B:
24-62 Տուներու առաջին գլխատառերը մոռցուած
են:
28 եկան A:
31 սեւերես AB:
34 չկա B:
37 սաղաղա B: + ի մեզ A:

(2) Հմմտ. Մտք. Ին, 11-12:

ՄԱՍԻԿՈՆԵԱՆՆԵՐՈՒ ԴՍԵՂԻ ՃԻԻՂԸ

Յայս տեղս ոչ ճար վայ գործելոյ
ու ոչ մոյր կուտան մեզ.
50 Ու առանց գնոյ չեն ի ծախել,
որ վաճառ առնեմք մեզ:

Վասն այն գնա դու յայն քաղաքն,
ծանօթացո զքեզ.
Այլ եւ ուսիր դամէն հնարք
55 զոր ինչ խրատես զքեզ:

Շուտով քեզ տեղ տես եւ դադարք,
ու անդ ժողովեա զքեզ.
Եւ դամենայն վաճառ զոր կայ,
այսօր արա քեզ:

60 Զինի քէ յետոյ առանց գնոյ
վաճառ չտան զքեզ.
Դու շատ փ չուրջ դաս մուրալով
ու մնաս սեւերես:

(Շարունակելի)

Հրտ. Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



48 կա AB:
49 մուր B:
50 գնոյ A:
52 գնայ B: գնա A:
53 ծանօթացոյ AB:
54 հնարք B:
57 ժողովեայ A:
60 Զլինի B: գնոյ B:
61 չըտան B:
62 մուրալով B:
63 մնաս B:

Մամիկոնեաններու այս ճիւղը ե՞րբ
հաստատուեցաւ Դսեղի մէջ, յայտնի չէ:
Անոնց նախահայրը հոն Համադասալ Մա-
միկոնեանն էր: Եւ որովհետեւ Մամիկոնե-
աններու այս ճիւղին մեզի ծանօթ յիշա-
տակարաններէն հնազոյնը 1191 թուակա-
նը կը վրէ, ուր իբր մեծ հայ կը ներկա-
յացուի կամ կը յիշուի Համադասալ Մամի-
կոնեանը, մենք ստիպուած ենք խորհելու
որ Դսեղի Մամիկոնեանց այս ճիւղը հիմ-
նուած է ոչ աւելի կանուխ քան 1100 թը-
ւականները:

Կարելի չէ կասկածել, որ այս ճիւղն
ալ, ինչպէս Սասունի թոռնիկեան Մամի-
կոնեանց ճիւղը, ուղղակի սերած են Մա-
միկոնեան մեծ ու անուանի տունէն: Զէ
կարելի կասկածել, որովհետեւ Դսեղի
Մամիկոնեանք խնամիական սերտ կապե-
րով կապուած էին վաչուտեանց եւ Օր-
պէլեանց մեծ տուներուն:

Ի՞նչպէս, ինչո՞ւ եւ ե՞րբ Համադասալ
Մամիկոնեան Դսեղ հաստատուեցաւ, ա-
սոնք առ այժմ մութ մնացած հարցեր են,
հակառակ խիստ հետաքրքրական ըլլալ-
նուն: Իրենց մասին արձանագրութեանց
չարք մը միայն հասած է իրենց ժամանա-
կակից պատմական — մատենագրութեան
քանի մը վկայութեանց հետ: Ասոնց վը-
րայ հիմնուելով եղած են քանի մը շատ
համառօտ ակնարկութիւններ հոս ու հոն
մեր արդի մատենագրութեանց մէջ: Ող-
բացեալ Գարեգին Սրբազան Յովսէփեան
վերեւայ թէ մտադիր էր այս Մամիկոնե-
աններով զբաղելու, ինչպէս զբաղած էր
Պոռչեանց, Օրպէլեանց եւն. տոհմերով:
Ան կը գրէր. «Տոհմի (Դսեղի Մամիկոնե-
անց) պատմութեան եւ շինարարութեան
մասին ունինք առանձին աշխատութիւն
(ԺԳ. դարից սկսած)»(1): Ասիկա վատա-
րած է թէ ոչ՝ չեմ գիտեր: Եթէ վատարած

(1) Հաւուց Թառի Ամենափրկիչը, էջ 72, ծան.: